



Գաւառի պարիսպ

ՆՇԱՆԱՒՈՐ ԲԵՐԳԵՐ

Դանձակի քերդ.—Դանձում է համանուն քաղաքի հիւսիսային կողմում, հարթ դաշտի վրայ: Բազմաթիւ պատերազմների ասպարէզ դառնալուց յետ, 1870 թուին հիմնովին քանդուեց ուսաց կառավարութեան կարգադրութեամբ: Այժմ այստեղում շինուած է և շինում են զանազան շինութիւններ, ահագին բանտը, տներ և այլն: Զետեղելով վերջնական աւերումից առաջ հանուած պատկերը, առաջ ենք բերում Եւսկիւ նկարադրութիւնը, որ արել է 1835 թուին. «Դանձակի քերդը, ամենաբնդարձակը Վրաստանում, ունի վեց աշտարակ և բռնում է մի քառակուսի վերստից սուլի տարածութիւն: Աշտարակներն ու թուձքերը քարով են ծածկուած» *): Բերդի մէջ գտնում էր խանի պալատը, որ երեք զարտամներից,— թաղակապ սենեակներից—էր բաղկացած **):

Ղալաֆեանդ կամ Փառխառ-քերդ.—Ցեղաւորուած է համանուն գիւղի հիւսիսային կողմում բարձրացող մի ժայռոտ լեռան գագաթին: Այս լեռը միայն արեւմտեան կողմից միացած է Ղանդալ լեռան հետ, իսկ միւս երեք կողմից նա աւանջնացած է և ռաստիկ գաւիղեր: Մի հաստ, մօտ 3,5 մետր լայնութեան պարփապ բոլորում է լեռան գագաթին, 12 աշտարակներով և մի գոնով արեւելեան կողմից: Բերդի երկարութիւնը կը լինի մօտ 110 մետր, իսկ լայնութիւնը 85-գնա ևս կիսուեր մնում են երկու փոքրիկ մատուռներ, իսկ միւս շինութիւնների հետքերն են միայն նկատելի: Հիւսիսային պարսպին կից կան երկու ստորերկրեայ թաղակապ սենեակներ, որոնք միմեանց հետ հաղորդակցուած են մի գոնով: Արանցից առաջինը կիսով լստի լցուած է հողով, իսկ միւս մասը, ինչ-

*) Очертеженіею описаніе Закавказскаго края соед. Кноразіа. С.-Петербургъ 1836.

**) Меллеръ. „Кавказъ“ 1864 г. № 35.

ալէս և ամբողջ երկրորդ տննակը, լի է յստակ և սառն ջրով: Ասում են, թէ այս ջուրը բերուած է մօտակայ Ղանդալ տարից և Հաղորդակցութիւն ունի Ղարա-բալայի աղբիւրի հետ, որ բղխում է բերդի հիւսիսային ձորում, զարմնելով երկու ջրաղաց: Պատմում էին, թէ երբ բարդ են ածել այս ջրամբարի մէջ, նկատել են, որ զուրս է եկել վերալեռնայ աղբիւրից:

Քերձերի մէջ կան երեք հատ արուեստական լճաւայեր:

Մամուռ քերդ.— Ըստ Հայր Զալալեանի ^{*)}, այս բերդը հիմնել է Մամուռ իշխանը, որ միևնոյն ժամանակ նպաստել է և Դաւիթ Նախկոպոսին՝ կանգնելու Չարեքայ անա-



Մամուռ քերդ:

պատը: Կիրակոս Գանձակեցին ^{**)} Չարեքայ բերդ, իսկ Վարդան պատմիչը ^{***)} ձմեղ է կոչում այս բերդին:

Դանում է Չարեքայ վանքի կալուածքում, վանքից մօտ երկու վերստ հեռու, զէպի արևելք, Համբար և Գնտարէկ գետերի միախառնման կէտում բարձրացող մի անտառապատ լեռան աղաւաթոտ գագաթին: Բերդը ունի թրձած կարմիր

*) Ճանապարհորդութիւն, Կ. Ս. եր. 164:

**) Պատմ. Հայոց. եր. 103—105:

***) Վարդ. պատմիչ եր. 18:

աղբիսից պարիսպ և արևելեան կողմում կրկնապարիսպ, ամբողջուած միքանի աշտարակներով: Բերդի մէջ կայ մի կոնաձև բլուր, աների աւերակներ, ջրի խանգարուած առաջանի մնացորդներ և քարայրեր: Բերդը այժմ պատած է մացառներով: Բերդի տակ, գետի վրայ եղել է մի քարաշէն կամուրջ, որի կամարը այժմ ընկած է և տեղը փայտեր ձգած:

Մլզնաբերդ կամ Մածնաբերդ.—Դառնում է ՀարցՀանգիստ գիւղի մօտ, մի սրածալք սարի գագաթին: Սա պատկանում էր Աղստղանայ որդի Կիւրիկէ թագաւորին, ուր և ինքք բնակւում էր: Բերդատարի միայն արևմտեան կողմը պատած է ամուր պարսպով, որ ունի երեք աշտարակ, իսկ միւս երեք կողմերը ապառաժոտ և անմերձեայի են: Ունի միայն մի դուռն արևմտեան կողմից: Բերդս ունի նաև միջնաբերդ, առանձին պարսպով: Սա տեղացիներից կոչւում է Նաբին-ղալա: Բերդի Հիւսիսային մասում այժմ մի բարակ ջուր է Հասում, իսկ արևմտեան կողմում նկատելի են խեցեղէն խողովակներ, որոնցով երբեմն ջուր է բերուած բերդս:

Ղալա-բոյուն.—Բերդաքաղաքս գտնւում է Զական գետակի ձախ կողմում բարձրացող լեռան վրայ: Ունի շրջապարիսպ, որ կիսաւեր է: Կան երեք եկեղեցու, բազմաթիւ տների ու խոնութների աւերակներ: Կայ և մի քնդարձակ գերեզմանատուն:

Քառանուկ տեղակ կամ Բալլու-ղալա և Չափաւ-ղալա.—Առաջինը տեղաւորուած է Մռաւ լեռան արևմտեան, իսկ երկրորդը՝ արևելեան լանջին, միմեանցից մօտ եօթ վերտահեաւորութեամբ: Առաջնում մնում է մի փոքրիկ եկեղեցու աւերակ, իսկ երկրորդում՝ սլէնշ: Այս երկու տեղն էլ ծառայելիս են եղել Գիւլիստանի ժողովրդներին իբր ապաստարան՝ թշնամաց յարձակման միջոցին:

Ղըզ-ղալա.—Կանգնած է Ղուլալի գիւղից վերև, Եինջի վտակի աջ ափին բարձրացած սեպաձև և անմատչելի ժայռի գագաթին, որ միմիայն մի գծուարանցանելի ճանապարհ ունի արևելեան կողմից: Ժայռի գագաթը մի փոքրիկ Հարթութիւն է ներկայացնում և շրջապատուած է եղել պարսպով: Ժայռի

